ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2012 թվականի N 1212 - Ն

ԱԽՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել ախտաբանաանատոմիական փորձաքննությունների անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 29
Երևան

karN1212

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
սեպտեմբերի 27 -ի N 1212 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱԽՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ախտաբանաանատոմիական փորձաքննությունների իրականացման և դրա արդյունքներն այլ անձանց տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը չի տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերով նախատեսվող փորձաքննությունների վրա:

3. Ախտաբանաանատոմիական փորձաքննությունը կատարվում է բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի համար լիցենզավորված հաստատությունում (այսուհետ՝ հաստատություն)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:

4. Ախտաբանաանատոմիական փորձաքննության հիմնական նպատակն ախտաբանական հետազոտությունների արդյունքների և կլինիկական տվյալների համադրումը և վերջնական ախտորոշման հաստատումն է:

II. ԱԽՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Ախտաբանաանատոմիական փորձաքննությունը, որպես բժշկական փորձաքննության ձև, ներառում է՝

1) բիոպսիոն հետազոտությունը, կատարման ժամկետը՝ 3 օր.

2) ցիտոլոգիական հետազոտությունը, կատարման ժամկետը՝ մեկ օր.

3) ախտաբանաանատոմիական հերձումը, կատարման ժամկետը՝ 24 ժամ.

4) ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա) նյութի հետազոտությունը, կատարման ժամկետը՝ առնվազն՝ 15 օր.

5) ընկերքի հետազոտությունը, կատարման ժամկետը՝ մինչև 15 օր.

6) փորձագիտական խորհրդատվությունը, կատարման ժամկետը՝ մեկ օր.

7) բժշկական միջամտության հետևանքների փորձագիտական գնահատումը, կատարման ժամկետը՝ մեկ ամիս.

8) բժշկական փաստաթղթերի փորձաքննությունը, կատարման ժամկետը՝ մեկ ամիս:

6. Ախտաբանաանատոմիական փորձաքննությունն իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետի և այլ բժշկական մասնագետների մասնակցությամբ՝ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի կամ ընտանիքի անդամների դիմումի հիման վրա:

7. Ախտաբանաանատոմիական փորձաքննության օբյեկտ են համարվում մահացածի մարմինը, կենդանի մարդու և մահացածի օրգանները, հյուսվածքները, խոռոչավոր օրգանների պարունակությունը, գեղձերի արտազատուկը և բժշկական փաստաթղթերը:

III. ԱԽՏԱԲԱՆԱԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

8. Ախտաբանաանատոմիական փորձաքննության արդյունքում կազմվում է գրավոր եզրակացություն, որում նշվում են եզրակացության կազմման օրը, ամիսը, տարեթիվը, պացիենտի ազգանունը, անունը, հայրանունը, սեռը, տարիքը, սույն կարգի 5-րդ կետով նախատեսված գործողությունների իրականացման ընթացքը և դրանց արդյունքները:

9. Ախտաբանաանատոմիական փորձաքննության վերաբերյալ եզրակացությունն ստորագրվում է փորձաքննությանը մասնակցած բոլոր մասնագետների կողմից: Եթե մասնագետներից որևէ մեկը փորձաքննության արդյունքում միասնական կարծիքի չի հանգում, ապա յուրաքանչյուր մասնագետ կազմում է առանձին եզրակացություն:

10. Ախտաբանաանատոմիական փորձաքննության արդյունքում վերջնական հաստատված ախտորոշումը գրանցվում է հիվանդության (ծննդաբերության) պատմության մեջ, իսկ եզրակացությունը կցվում է հիվանդության (ծննդաբերության) պատմությանը:

11. Ախտաբանաանատոմիական փորձաքննության արդյունքում ստացված տեղեկությունները, ինչպես նաև արդյունքում կազմված եզրակացությունը համարվում են բժշկական գաղտնիք և պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Ախտաբանաանատոմիական փորձաքննության վերաբերյալ եզրակացությունը հաստատության ղեկավարի կողմից տրամադրվում է միայն՝

1) պացիենտին կամ օրինական ներկայացուցչին՝ կենդանի մարդու նկատմամբ իրականացվող ախտաբանաանատոմիական փորձաքննության դեպքում.

2) ընտանիքի անդամներին՝ մահացածի նկատմամբ իրականացվող ախտաբանաանատոմիական փորձաքննության դեպքում.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ ոստիկանությանը, դատախազությանը, ազգային անվտանգության ծառայությանը, հատուկ քննչական ծառայությանը կամ դատարանին:

13. Ախտաբանաանատոմիական փորձաքննության վերաբերյալ եզրակացությունը սույն կարգի 12-րդ կետի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված անձանց տրամադրվում է

ախտաբանաանատոմիական փորձաքննության ավարտից հետո 5-օրյա ժամկետում, իսկ սույն կարգի 12-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված մարմիններին՝ հարցումն ստանալուց հետո 2-օրյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ